«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-827-29.12.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել նոր պարբերություն, այն է՝ գրավատուն և գրավառուն պարտավոր են շարժական գույքի գրավի պայմանագրով ամրագրել գրավատուի, կամ նրա լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով պետական սահմանը հատելու իրավունքը, կամ դրա սահմանափակումը:

Առաջարկվող կարգավորումը հիմնավորվում է նրանով, որ ներկայումս գործող կարգավորումներն ամբողջապես չեն կարգավորում գրավատուի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով Հայաստանի Հանրապետության սահմանը հատելու հետ կապված պրակտիկ խնդիրները: Արդյունքում գրավատուն ցանկացած պահի կարող է գրավադրված տրանսպորտային միջոցով հատել Հայաստանի Հանրապետության սահմանը՝ այդպիսով ռիսկի տակ դնելով գրավադրված տրանսպորտային միջոցի իրացվելիությունը:

Վերոգրյալի համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե գրավատուի, կամ նրա լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով պետական սահմանը հատելու իրավունքը գործնականում սահմանափակելու միջոցներ առկա են, թե՝ ոչ:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ պետական սահմանով՝ անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնման գործառույթ իրականացնող լիազոր մարմինը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին

մասով նախատեսված կարգավորումների լույսի ներքո՝ նախագծով առաջարկվող կարգավորումների առումով որևէ իրավասությամբ օժտված չէ: Առկա չեն նաև նախագծով առաջարկվող կարգավորումների կիրառման ապահովմանն ուղղված համապատասխան կառուցակարգերը:

Բացի այդ, Նախագծին հարկ ենք համարում անդրադառնալ պայմանագրի ազատության սկզբունքի, ինչպես նաև գրավի առարկայի օգտագործման և տնօրինման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված կարգավորումների վերլուծության լույսի ներքո: Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածը, ի թիվս քաղաքացիական օրենսդրության այլ հիմնարար սկզբունքների, ամրագրում է նաև պայմանագրի ազատության սկզբունքը:

Օրենսգրքի 238-րդ հոդվածով կարգավորվում են գրավի առարկայի օգտագործման և տնօրինման հետ կապված հարաբերությունները: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավատուն իրավունք ունի օգտվելու գրավի առարկայից՝ դրա նշանակությանը համապատասխան, այդ թվում՝ դրանից ստանալու պտուղներ և եկամուտներ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **գրավառուն** իրավունք ունի օգտվելու իրեն հանձնված գրավի առարկայից **միայն պայմանագրով** նախատեսված դեպքերում՝ գրավատուի պահանջով հաշվետվություն ներկայացնելով դրա օգտագործման մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ գրավադրված տրանսպորտային միջոցով ՀՀ պետական սահմանը հատելու իրավունքի կամ դրա սահմանափակման վերաբերյալ իմպերատիվ պահանջի փոխարեն անհրաժեշտ է քննարկել հայեցողական կարգավորման ամրագրման հարցը, մասնավորապես՝ Օրենսգրքում ամրագրելով դրույթ առ այն, որ գրավատուն և գրավառուն ***կարող են*** շարժական գույքի գրավի պայմանագրով ամրագրել գրավատուի, կամ նրա լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով ՀՀ պետական սահմանը հատելու իրավունքը կամ դրա սահմանափակումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ներկայացված նախագիծը վերը նշված դիտարկումների համատեքստում լրամշակման կարիք ունի: